ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՉՀ-ՄԱԱՊՁԲ-2022/1-1»

ք. Չարենցավան «09» 03 2022թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **Ա/Ձ Աշխեն Անտոնյանը**, ի դեմս **Ա. Անտոնյանի**, որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5 (հինգ)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **5 (հինգ)** օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **700000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը

կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **երկու** օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **17 (տասնյոթ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԳՆՈՐԴ»	«ՎԱՃԱՌՈՂ»
Չարենցավանի համայնքապետարան	**Ա/Ձ Աշխեն Անտոնյան**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան	**ք. Չարենցավան Պռոշյան 7**
հրապարակ թիվ 1	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
ՀՀ ՖՆ ԳՎ	**Հ/Հ 220439821137000**
Հ/Հ 900132111023	**ՀՎՀՀ 40009732**
ՀՎՀՀ 03022497	**էլ. հասցեն antonyan777@list.ru**
	Հեռ. (+37499) 44-22-30
Համայնքի ղեկավար՝	**Ա. Անտոնյան**
Հ. Կ. Շահգալդյան	
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	

Հավելված N 1
«09» «03» 2022թ. կնքված
N «ՀՀ-ՄԱԱՊՁԲ-2022/1-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	39831241	Օճառ, ձեռքի	Ձեռքերը լվանալու համար օճառ չոր, 100 գրամ: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» համաձայն:	կգ	1000	100000	100	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	100	25.12.2022թ.
2	39831244	Օճառ, տնտեսական	Որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 78 գ, սոդայանյութերի զանգվածային մասը (վերահաշվարկված ըստ Na2O)՝ 0,2-ից ոչ ավելի, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ 36-41 0C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, փրփուրի նախնական ծավալը՝ 350 սմ^3 -ից ոչ պակաս, անվտանգությունը՝ Սան Պին 1.2.681-97:	կգ	450	45000	100	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	100	25.12.2022թ.
3	39831245	Օճառ, հեղուկ	Ձեռքերը լվանալու համար, 1 լիտր շշերով, տարբեր հոտերի:	լիտր	450	45000	100	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	100	25.12.2022թ.
4	39831242	Լվացքի փոշի,	Բաց դեղնավուն կամ գունավորած	կգ	500	10000	20	ք.	20	25.12.2022թ.

		ձեռքով լվանալու համար	հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» համաձայն:					Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1		
5	39836000	Ավել, սովորական	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ:	հատ	800	48000	60	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	60	25.12.2022թ.
6	33761000	Զուգարանի թուղթ, ռուլոնով	Եռաշերտ, 9,8սմx12,5սմ, 150 թերթիկ, երկարությունը 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին	հատ	100	12000	120	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1 .	120	25.12.2022թ.

			ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:							
7	39224331	Դույլ, պլաստմասե	Պլաստմասե, 10 լ տարողության, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	600	12000	20	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	20	25.12.2022թ.
8	39224341	Աղբարկղ, պլաստմասե	Զամբյուղատիպ, պլաստմասե, 10 դմ^3 տարողությամբ:	հատ	800	8000	10	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	10	25.12.2022թ.
9	39513200	Թղթե անձեռոցիկ, երկշերտ	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, թղթի 1 մ^2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	100	46000	460	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	460	25.12.2022թ.
10	39835000	Հատակ մաքրելու ձող, փայտյա	1,5-2 մ երկարության, փայտե, լաքապատված:	հատ	1000	20000	20	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	20	25.12.2022թ.
11	30192210	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, մեծ	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ:	հատ	250	7500	30	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	30	25.12.2022թ.
12	30192220	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, փոքր	Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ:	հատ	50	1500	30	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	30	25.12.2022թ.
13	39839100	Գոգաթիակ,	Մետաղյա, հաստությունը՝ 0,8 մմ, 1 մ	հատ	150	3000	20	ք.	20	25.12.2022թ.

		աղբը հավաքելու համար, ձողով	երկարությամբ ձողով:					Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1		
14	39811300	Հոտազերծիչ, օդի	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով:	հատ	600	36000	60	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	60	25.12.2022թ.
15	39812410	Կահույքի փայլեցման միջոց	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով:	հատ	800	24000	30	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	30	25.12.2022թ.
16	39831250	Ժավել	Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ, ակտիվ քլորի պարունակությունը 120 կգ/մ^3:	լիտր	150	15000	100	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	100	25.12.2022թ.
17	39831278	Սպասքի լվացման փոշի	Մածուկանման զանգված, օգտագործված հոտավորիչի հոտով, գույնը՝ ըստ լվացող միջոցների գույն որոշման սանդղակի, ջրածնային ցուցիչը (pH) 9-10,5, մակերևութաակտիվ նյութի զանգվածային մասը՝ ոչ պակաս 18 %, ջրում չլուծվող նյութերի զանգվածային մասը՝ ոչ ավելի 3 %, խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 50 %, չափածրարված պոլիմերային կամ ապակե տարաներում: Անվտանգությունն ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշման:	հատ	400	20000	50	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	50	25.12.2022թ.
18	39831200	Ռակշա	Բաց դեղնավուն կամ գունավորված հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավելի 5 %, pH՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավելի 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր,	հատ	350	42000	120	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	120	25.12.2022թ.

			լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ՀՍ 275-2007: Անվտանգությունն ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշման:							
19	39831280	Ապակի մաքրելու միջոց	Լվացման միջոց նախատեսված ապակիների մաքրման համար: Անվտանգությունն ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշման:	լիտր	500	60000	120	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	120	25.12.2022թ.
20	39831281	Ապակի մաքրման լաթ	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից:	հատ	150	10500	70	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	70	25.12.2022թ.
21	39831282	Կահույք մաքրելու լաթ	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից:	հատ	200	16000	80	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	80	25.12.2022թ.
22	39831283	Հատակի լվացման լաթ	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից:	հատ	700	38500	55	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	55	25.12.2022թ.
32	24451141	Ախտահանիչ հեղուկ նյութեր (ալկոգել), 70-80%, 500մլ	Պարունակում է իզոպրոպանոլ, էթանոլ, բենզալկոնիումի քլորիդ, էմուլգատոր, մածուցիկության կարգավորիչ, դեոնիզացված խմելու ջուր: Ակտիվ է հետևյալների հանդեպ. Վիրուսներ՝ ադենովիրուսներ, ՍԱՐՍ, միավ, հերպես, գրիպ, կորոնավիրուսներ, պարաինֆլյուզա, պարաներտերալ հեպատիտներ, պոլիոմելիտ, այլ	հատ	1000	50000	50	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	50	25.12.2022թ.

			պաթոգեններ. բակտերիաներ՝ ներհիվանդանոցային վարակների հարուցիչներ, գրամ-բացասական մանրէներ, գրամ-դրական մանրէներ: Մածուծանման անգույն զանգված, փաթեթավորված 500մլ տարաներով:							
33	33631250	Էթիլ սպիրտ, 98%	Էթանոլ ethanol լուծույթ 96 %: Փաթեթավորումը՝ 1 լիտր տարաներով: Ֆորմատ՝ լիտր:	լիտր	1000	30000	30	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1	30	25.12.2022թ.

«ԳՆՈՐԴ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
Ա/Ձ Աշխեն Անտոնյան
ք. Չարենցավան Պռոշյան 7
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220439821137000
ՀՎՀՀ 40009732
էլ. հասցեն antonyan777@list.ru
Հեռ. (+37499) 44-22-30

Ա. Անտոնյան

(ստորագրությունը)

Հավելված N 2
«09» «03» 2022 թ. կնքված
N «ՀՀ-ՄԱԱՊՁԲ-2022/1-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	39831241	Օճառ, ձեռքի	0	0	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000
2	39831244	Օճառ, տնտեսական	0	0	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000
3	39831245	Օճառ, հեղուկ	0	0	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000
4	39831242	Լվացքի փոշի, ձեռքով լվանալու համար	0	0	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
5	39836000	Ավել, սովորական	0	0	48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000

6	33761000	Զուգարանի թուղթ, ռուլոնով	0	0	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
7	39224331	Դույլ, պլաստմասե	0	0	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
8	39224341	Աղբարկղ, պլաստմասե	0	0	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
9	39513200	Թղթե անձեռոցիկ, երկշերտ	0	0	46000	46000	46000	46000	46000	46000	46000	46000	46000	46000	46000
10	39835000	Հատակ մաքրելու ձող, փայտյա	0	0	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
11	30192210	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, մեծ	0	0	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500
12	30192220	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, փոքր	0	0	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
13	39839100	Գոգաթիակ, աղբը հավաքելու համար, ձողով	0	0	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000

14	39811300	Հոտաազերծիչ, օդի	0	0	16000	10500	60000	42000	20000	15000	24000	36000	16000	10500	60000	42000	20000	15000	24000	36000	16000	10500	60000	42000	20000	15000	24000	36000	16000	10500	60000	42000	20000	15000	24000	36000	16000	10500	60000	42000	20000	15000	24000	36000
15	39812410	Կահույքի փայլեցման միջոց	0	0	24000	15000	20000	42000	60000	10500	16000	36000	24000	15000	20000	42000	60000	10500	16000	36000	24000	15000	20000	42000	60000	10500	16000	36000	24000	15000	20000	42000	60000	10500	16000	36000	24000	15000	20000	42000	60000	10500	16000	36000
16	39831250	Ժավել	0	0	15000	0	0	0	0	0	0	0	15000	0	0	0	0	0	0	0	15000	0	0	0	0	0	0	0	15000	0	0	0	0	0	0	0	15000	0	0	0	0	0	0	0
17	39831278	Սպասքի լվացման փոշի	0	0	20000	2000	6000	4200	2000	1500	2400	3600	20000	2000	6000	4200	2000	1500	2400	3600	20000	2000	6000	4200	2000	1500	2400	3600	20000	2000	6000	4200	2000	1500	2400	3600	20000	2000	6000	4200	2000	1500	2400	3600
18	39831200	Ռակշա	0	0	42000	1050	6000	4200	2000	1500	2400	3600	42000	1050	6000	4200	2000	1500	2400	3600	42000	1050	6000	4200	2000	1500	2400	3600	42000	1050	6000	4200	2000	1500	2400	3600	42000	1050	6000	4200	2000	1500	2400	3600
19	39831280	Սպակի մաքրման միջոց	0	0	60000	6000	4200	2000	1500	2400	3600	1600	60000	6000	4200	2000	1500	2400	3600	1600	60000	6000	4200	2000	1500	2400	3600	1600	60000	6000	4200	2000	1500	2400	3600	1600	60000	6000	4200	2000	1500	2400	3600	1600
20	39831281	Սպակի մաքրման դրոշմ	0	0	10500	1050	600	420	200	150	240	360	10500	1050	600	420	200	150	240	360	10500	1050	600	420	200	150	240	360	10500	1050	600	420	200	150	240	360	10500	1050	600	420	200	150	240	360
21	39831282	Կահույքի մաքրման դրոշմ	0	0	16000	1050	600	420	200	150	240	360	16000	1050	600	420	200	150	240	360	16000	1050	600	420	200	150	240	360	16000	1050	600	420	200	150	240	360	16000	1050	600	420	200	150	240	360

22	39831283	Հատակի լվացման լաթ	0	0	38500	38500	38500	38500	38500	38500	38500	38500	38500	38500	38500
32	24451141	Ախտահանիչ հեղուկ նյութեր (ալկոգել), 70-80%, 500մլ	0	0	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000
33	33631250	Էթիլ սպիրտ, 98%	0	0	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

«ԳՆՈՐԴ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
Ա/Ձ Աշխեն Անտոնյան
ք. Չարենցավան Պռոշյան 7
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220439821137000
ՀՎՀՀ 40009732
էլ. հասցեն antonyan777@list.ru
Հեռ. (+37499) 44-22-30

Ա. Անտոնյան

(ստորագրությունը)